«ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳԱՄԲԻՏ 2023»

ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

22 հուլիսի 2023թ.

1. **ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ**
   «Քայթլաբ» ընկերություն
   Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
2. **ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ/ԳՈՐԾԸՆԿԵՐ**
   Մրցաշարը, անց է կացվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայաստանյան ներկայացուցչության հովանու ներքո մի շարք գործընկերների աջակցությամբ և մասնակցությամբ:
3. **ՆՊԱՏԱԿ**
   Մրցաշարը նվիրված է կլիմայի փոփոխության խնդիրների հանրայնացմանը և կլիմայական օրակարգում հանրային մասնակցության կարևորությանը:

4. **ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ**
   «ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳԱՄԲԻՏ 2023» ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐԸ կանցկացվի Երևանի բուսաբանական այգում /ք.Երևան, Աճառյան 1/:

5. **ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**
   «ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳԱՄԲԻՏ 2023» ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐԸ տեղի կունենա 2023 թվականի հուլիսի 22-ին:

22 հուլիսի	11:00	1-ին տուր,
22 հուլիսի	11:30	2-րդ տուր,
22 հուլիսի	12:00	3-րդ տուր,
22 հուլիսի	12:30	4-րդ տուր,
Ընդմիջում	13:00 – 13:30	
22 հուլիսի	13:30	5-րդ տուր,
22 հուլիսի	14:00	6-րդ տուր,
22 հուլիսի	14:30	7-րդ տուր:

6. **ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Մրցաշարին կարող են մասնակցել.

- մինչև 18 տարեկան շախմատիստները - առնվազն 2-րդ կարգ - մինչև 2100 ազգային վարկանիշ /2023 թվականի մայիսի 1-ի դրությամբ/,
- չափահաս շախմատիստների համար առանց կարգ – մինչև 2150 ազգային վարկանիշ /2023 թվականի մայիսի 1-ի դրությամբ/։

7. ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ

Մրցանակներ
Հիմնական
I տեղ
II տեղ
III տեղ
IV տեղ
V տեղ
Հատուկ մրցանականեր
Լավագույն արդյունք ցույց տված **շախմատիստուհի**
Լավագույն արդյունք ցույց տված **կարգային** մասնակից
Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12** տարեկան մասնակից
Լավագույն արդյունք ցույց տված 65+ տարեկան մասնակից
Մարզերի լավագույն արդյունք ցույց տված մասնակից
Հատուկ մրցանակ թիմային արդյունքի համար

8. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Մրցաշարում հաշվարկվելու է նաև թիմային արդյունքները, հաշվի առնելով յուրաքանչյուր կազմակերպության լավագույն երկու արդյունքի հանրագումարը /հավասար միավորների դեպքում հաշվի է առնվելու մրցաշարում տվյալ խաղացողների գրված տեղը/։

9. ԺԱՄԱԿԱՐԳ

10 րոպե մինչև պարտիայի ավարտը (2 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

Մրցաշարը կանցկացվի ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 7 խաղափուլով:

10. ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

Մրցաշարի մասնակցության վճարը յուրաքանչյուր մասնակցի համար կազմում է 5 000 ՀՀ դրամ:

Մրցաշարի կայքէջում https://www.mountincredible.com/cg-registration անհրաժեշտ է լրացնել բոլոր դաշտերը և սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը և կատարել վճարումը նշված տարբերակներից մեկի միջոցով, նշելով համապատասխան դաշտերում գրանցվող մասնակցի անուն/ազգանունը:

idram հավելվածի միջոցով սկանավորելով հետևյալ QR կոդը

idram հավելվածի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել Քայթլաբ ՍՊԸ-ի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝	Քայթլաբ ՍՊԸ
Բանկ՝	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝	15700 93263880100
ՀՎՀՀ՝	00226199

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել **«ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳԱՄԲԻՏ 2023», մասնակցի անունը, ազգանունը, ծննդյան տվյալներ, կարգ/վարկանիշ, կոնտակտային հեռախոսահամար, կազմակերպության անուն/եթե նույն կազմակերպությունից մասնակցում է 1-ից ավելի մասնակից/**:

11. ԳՐԱՆՑՈՒՄ

Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետն է 2023 թվականի հուլիսի 18-ը, ժամը 18:00-ն:

12. ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հեռ՝ +374 10 448473, +374 43 448473, +374 91 192514 Էլ. փոստ՝ info@chessacademy.am

KiteLAB
Communicating Science

unesco
Հայաստանի Ազգային Հանձնաժողով

UNITED NATIONS ARMENIA

CHESS ACADEMY OF ARMENIA

YEREVAN BOTANICAL GARDEN

AGBU

Armenian Chess Federation

ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ
HYDROMETEOROLOGY AND MONITORING CENTER

SPACE SHOP 42

RESEARCH INSTITUTE OF CHESS

MARRIOTT TSAGHKADZOR

bookinist

Environment and Health

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMENIAN RED CROSS SOCIETY